ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԾՔ-ԷԱԵԱՊՁԲ-25/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Անխափան սնուցման աղբյուրների և ցանցային սվիչի» ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր

20 մայիս 2025թ.-
27 մայիս 2025թ.

2025թ. մարտի 20-ից մայիսի 27-ը, Կոտայքի մարզ,Ծաղկաձոր համայնք,ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբայրների 9 հասցեում գտնվող Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում տեղի ունեցավ **«Անխափան սնուցման աղբյուրների և ցանցային սվիչի»** ձեռքբերման նպատակով **«ԾՔ-ԷԱԵԱՊՁԲ-25/5»** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Մասնակցում էին՝ Հանձնաժողովի նախագահ՝
համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ոսկան Եղիազարյան
Հանձնաժողովի անդամներ՝
համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման, հաշվառման բաժնի պետ Նարինե Խաչատրյան,
համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի պետ Ռիմա Մանուկյան,
համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ /բարեվարքության կազմակերպիչ/ Սամվել Ալոյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է չորս անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները,հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԱԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարագը.

1.Հանձնաժողովի նիստի օրակարագը հաստատելու մասին:
2.Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման գնի մասին:
3.Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4.Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների,ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5.Ընթացակարգի ընտրված մասնակցին հայտարարելու մասին:
6. Ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին:
7. Համակարգի միջոցով գեներացված հայտարարությունների և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:
8.Կատարված հարցումների,պարզաբանումների,հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների,հակաօրինական գործողությունների,ներկայացված բողոքների մասին:
9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:
Կողմ՝ 4,դեմ՝ 0:

2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ԳՆԻ ՄԱՍԻՆ

2025թ. մարտի 26-ին կայացած նիստում, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման գները՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չափաբաժնի ընդհանուր գնման գինը

1	անխափան սնուցման աղբյուրներ	300000
2	ցանցային սվիչ	105000

«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/5» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:
Կողմ՝ 4,դեմ՝ 0:
Հանձնաժողովը որոշեց.
1.Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
Կողմ՝ 4,դեմ՝ 0:

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/5» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցներ/.

h/h	Մասնակցի անվանումը	Հասցե,հեռ.	Էլ.փոստ	ՀՎՀՀ
1.	ԵԼ4008 ՍՊԸ	Երևան,Նորք Մարաշ Ս.Խանզադյան փ.2-րդ նրբ. 56տ. +37477470838	el4008el@gmail.com	00528722
2.	ՍԵԳ ՍՊԸ	Երևան Կուրղինյան նրբ. 6 շենք, բն.32 055019060, 077660786, 093369377	seg_tender@mail.ru	00878823
3.	"Սոֆոն" ՍՊԸ	Գյումրի,Սայաթ-Նովա 3/3 +374 98555305	info@sophon.am	00232725
4.	Արտակ Աբգարյան ԱՁ	Երևան Պռոշյան 29բն. 041661133	abgaryan-97@mail.ru	40095185

2025թ. մայիսի 23-ին կայացած նիստում, ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ **«ԵԼ4008» ՍՊԸ-ի** հայտը գնահատելիս Հանձնաժողովն արձանագրեց, որ վերոնշյալ մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- ***«ԵԼ4008» ՍՊԸ*** *– 2-րդ չափաբաժնի մասով առաջարկել էր այնպիսի արտադրող և ֆիրմային անվանում, որը չէր համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, անհրաժեշտ է ներկայացնել այնպիսի արտադրող և ֆիրմային անվանում, որը կհամապատասխանի հրավերով սահմանված և մասնակցի կողմից առաջարկված տեխնիկական բնութագրին:*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 41-րդ կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ **մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, ծանուցում ուղարկել մասնակցին և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում /26.05.2025թ. ներառյալ/** շտկել անհամապատասխանությունները:

2025թ. մայիսի 27-ին կայացած նիստում Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ **«ԵԼ4008» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

***Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:**

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ,ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. մայիսի 27-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները:

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում:

Չափաբաժիններ	*Մասնակցի անվանումը*	*Նախնական առաջարկ Արժեք*	*ԱԱՀ*	*Առաջարկված գինը*	*Վերջին առաջարկ Արժեք*	*ԱԱՀ*	*Առաջարկված գինը*	*Մասնակցի կարգավիճակ /ընտրված մասնակցի դեպքում X/*
2. ցանցային սվիչ	ԵԼ4008 ՍՊԸ	86666	**20 %**	103999.2	49000	20 %	58800.00	*X*
	Արտակ Աբգարյան ԱՁ	87500	20 %	105000	68000	20 %	81600.00	
	"Սոֆոն" ՍՊԸ	87370	20 %	104844	85799	20 %	102958.80	
	ՍԵԳ ՍՊԸ	158800	20 %	190560	158800	20 %	190560.00	Մերժված

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025թ. մայիսի 27-ին կայացած նիստում Հանձնաժողովը որոշեց՝ «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/5» ծածկագրով գնման ընթացակարգի **2-րդ չափաբաժնի արդյունքում ընտրված մասնակից հայտարարել՝** ԵԼ4008 ՍՊԸ **-ին՝** որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ 1-ԻՆ ՉԱՓԱԲԱԺԻՆԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. 2025թ. մայիսի 27-ին կայացած նիստում Հանձնաժողովը որոշեց՝ «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/5» ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով** «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը **(դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը), ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագիրը, գնումների համակարգողի եզրակացությունը և համայնքի ղեկավարի 26.05.2025թ. կայացրած 509 որոշումը,ըստ որի՝** 1-ին չափաբաժնով նախատեսվել էր ձեռք բերելու անխափան սնուցման աղբյուրներ՝ հետևյալ տեխնիկական բնութագրով՝ Հզորություն (VA) – 1500VA / 900W Մուտքային հոսանք – 230V Լարում – 220-240 VAC Հաճախականություն – 50/60 HZ+3Hz Լիցքավորման ժամանակ – 3 ժամ Մարտկոցի տեսակ – 4 x 12V 7AH Ելքային միացման տեսակը – 4 x IEC-320-C13 , 2 x IEC Jumpers Unit քանակը – 2U Երաշխիք – 1 տարի: Մատակարարումը պետք է իրականացվեր մատակարար կազմակերպության կողմից,Պատվիրատուի կողմից նշված հասցեով:

Հայտերի բացման վերջնաժամկետը լրանալուց հետո դադարել է գոյություն ունենալ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով ապրանքների գնման պահանջը, քանի որ ներկա պահին առաջնահերթ անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու ավելի թույլ պարամետրերով անխափան սնուցման սարքեր, իսկ հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրով սարքերը նախատեսվում է ձեռք բերել ավելի ուշ՝ համայնքապետարանի նոր կառուցվող վարչական շենքում օգտագործելու նպատակով:

2. Հանձնաժողովի քարտուղար Ա.ավետիսյանը գնահատող հանձնաժողովին ներկայացրեց ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Հանձնաժողովը որոշեց.

Հաստատել **«ԾՔ-ԷԱԵԱՊԶԲ-25/5»** ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:
Կողմ՝ 4,դեմ՝ 0:

7. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025թ. մայիսի 27-ին կայացած նիստում Հանձնաժողովի քարտուղար Ա.Ավետիսյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն /ներ/ի տեքստ/եր/ը:
Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ,ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ,ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել, պարզաբանումներ չեն տրամադրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագրի նախագիծը:
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակցին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	Ստորագրությունը
Նախագահ՝ Ոսկան Եղիազարյան	
Անդամներ՝ Նարինե Խաչատրյան	
Ռիմա Մանուկյան	
Սամվել Ալոյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	